



Գործ թիվ ԵՔՐԴ /0054/01/09

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն**

03 հունիսի 2009թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանը  
/այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ հետևյալ կազմով՝

ՆԱԽԱԳԱՅՐՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝	Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	Ե.ԴԱՐԲԻՆՅԱՆ
	Ս.ԶԻՉՈՅԱՆ
ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄԲ՝	Մ.ԱՐՏԵՍՅԱՆԻ
	ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝
ՄԵՂԱԴՐՈՂ՝	Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆ՝	Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Դռնբաց դատական նիստում ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ վարույթի կանոններով քննության առավ քրեական գործն ըստ մեղադրանքի՝

**Գարիկ Հենրիկի Հովհաննիսյանի՝** ծնված 27.11.1975թ., Երևան քաղաքում, ՀՀ քաղաղաքացի, ազգությամբ հայ, կրթությունը՝ թերի միջնակարգ, ամուրի, խնամքին ոչ ոք, չի աշխատում, նախկինում 2 անգամ դատված՝ 1. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 1999թ. ապրիլի 23-ի դատավճռով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 2 տարի ժամանակով, 2. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2000թ. հուլիսի 4-ի դատավճռով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-39-րդ հոդվածների համակցությամբ՝ ազատազրկման 2 տարի 3 ամիս ժամանակով, հաշվառված է Երևան, Նոր Արեշ 37-րդ փողոցի թիվ 129 տանը, բնակվել է ք. Երևան Շիրակի փողոցի թիվ 2ա շենքի թիվ 727 սենյակում, կալանքի տակ է 2008թ. հուլիսի 12-ից:

Մեղադրվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

2008թ. հուլիսի 12-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում հարուցվել է թիվ 12113608 քրեական գործը ՀՀ քր. օր.-ի 166հդ.-ի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով, նույն օրը ժամը 19.00-ին Գարիկ Հենրիկի Հովհաննիսյանը արգելանքի է վերցվել:

Նախաքննական մարմնի 15.07.2008թ. որոշմամբ Գարիկ Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդ.-ի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը կատարելու համար:

ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Էրեբունու քննչական բաժնի քննիչ Ա. Շահբազյանը 15.07.2008թ. որոշմամբ միջնորդություն է հարուցել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան՝ Գ. Հովհաննիսյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը դատարանի նույն օրվա որոշմամբ բավարարվել է, Գ. Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը 2/երկու/ ամիս ժամկետով, կալանքի սկիզբը հաշվելով 2008թ. հուլիսի 12-ից, որի ժամկետը նույն դատարանի 05.09.2008թ., 03.11.2008թ., Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 08.01.2009թ. որոշումներով երկարացվել է:

Նախաքննական մարմնի 12.02.2009թ. որոշումներով Գ. Հովհաննիսյանին ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդ.-ի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, նա ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քր. օր.-ի 132-<sup>1</sup> հոդ.-ի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, որով էլ նրան առաջադրվել է մեղադրանք:

2009թ. փետրվարի 24-ին քրեական գործը ըստ մեղադրանքի Գարիկ Հենրիկի Հովհաննիսյանի ՀՀ քր. օր.-ի 132-<sup>1</sup> հոդ.-ի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Երևանի Քրեական դատարան՝ ըստ էության քննության առնելու համար:

Երևանի քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը 2009թ. ապրիլի 2-ի դատավճռով ամբաստանյալ Գարիկ Հենրիկի Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132-<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և դատապարտել ազատազրկման 7/յոթ/ տարի ժամանակով, պատժի սկիզբը հաշվելով 2008թ. հուլիսի 12-ից, ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը թողնելով անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալը:

Վերաքննիչ բողոքի դեմ գրավոր պատասխան է ներկայացրել ՀՀ Գլխավոր դատախազության Սարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Ս. Սարգսյանը:

## **2. Գործի փաստական հանգամանքները.**

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը ապացուցված է համարել հետևյալը.

Ամբաստանյալ Գարիկ Հենրիկի Հովհաննիսյանը 2006թ-ին ծանոթացել է վկա Լիանուշ Միրզոյանի հետ, ապա բնակվել վերջինիս՝ Երևան քաղաքի Շիրակի փողոցի թիվ 2ա շենքի թիվ 727 սենյակում, նրա հետ վարել փաստական անուսնական կյանք: Լ.Միրզոյանի որդի, դեռահաս, տասնչորսամյա տուժող Վահան Իշխանյանի միջոցով ծանոթացել է վերջինիս ընկերոջ՝ «Վարդաշեն» թիվ 1 կրթահամալիրի սան, դեռահաս, տասնչորսամյա տուժող Արման Անդրանիկի Հակոբյանի հետ: Ամբաստանյալ Գ.Հովհաննիսյանը տեղեկանալով, որ տուժող Ա.Հակոբյանը պարբերաբար լքում է կրթահամալիրը և զբաղվում մուրացկանությամբ, չի ցանկանում հաճախել դպրոց, օգտագործել է նրա և տուժող Վ. Իշխանյանի վիճակի խոցելիությունն ու նրանց կանքին հակառակ դպրոց ուղարկելու ճնշման տակ, նյութական շահ ստանալու նպատակով, վերջիններիս ներգրավել է հարկադիր աշխատանքի մեջ՝ պարտադրելով Վահան Իշխանյանի հետ միասին Երևան քաղաքի տարբեր փողոցներում մուրացկանությամբ դրամ հավաքել և վաստակած գումարները հանձնել իրեն:

2007-2008թթ տարբեր ժամանակահատվածներում, երբ տուժող Ա.Հակոբյանը ժամանակավոր բնակվել է վկա Լ.Միրզոյանի սենյակում, վարձակալությամբ որպես տաքսի օգտագործելու նպատակով վերցրած «Գագ 31» մակնիշի 05 SL 453 պետհամարանիշի ավտոմեքենայով, ամբաստանյալ Գ.Հովհաննիսյանն ամեն

առավոտ տուժող Վ.Իշխանյանին և Ա.Յակոբյանին տեղափոխել է Երևանի կենտրոնական հատված, որտեղ երեխաները մուրացկանությամբ փող են հավաքել: Իսկ ուշ գիշերը նույն ավտոմեքենայով նրանց տեղափոխել է տուն՝ նրանցից վերցնելով հավաքված օրեկան 10.000-15.000 ՀՀ դրամ գումարը: Նշված հասցեում բնակվելու ընթացքում ամբաստանյալ Գ.Յովհաննիսյանն Արման Յակոբյանի մոտ ստեղծել է վախի մթնոլորտ. երբ տուժող Ա.Յակոբյանը հրաժարվել է Գ.Յովհաննիսյանի պահանջով մուրացկանությամբ գումար հավաքել, զայրացել է նրա վրա, սպառնացել է՝ տանից վռնդել և ուղարկել դպրոց:

2007թ. սեպտեմբեր ամսին ամբաստանյալ Գ.Յովհաննիսյանը տուժող Վահան Իշխանյանի միջոցով ծանոթացել է նաև մյուս տուժողներ՝ «Նուբարաշենի» թիվ 18 կրթահամալիրի սաներ, դեռահաս, տասներկուամյա Յովհաննես Աշոտի Պողոսյանի և անչափահաս՝ տասնվեցամյա Մերաբ Անատոլիի Բժանիայի հետ: Գիշերելու համար վկա Լիանուշ Միրզոյանին պատկանող սենյակում նրանց ժամանակավոր կացարան տրամադրելու պայմանով և օգտագործելով Մ. Բժանիայի ու Յ.Պողոսյանի վիճակի խոցելիությունը, բնակարանից վտարելու և կամքին հակառակ դպրոց ուղարկելու ճնշման տակ, ինչպես նաև Մ.Բժանիայի կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով և դրա գործադրմամբ, որն արտահայտվել է բռունցքներով նրա մարմնի տարբեր մասերին հարվածներ հասցնելով, նյութական շահ ստանալու նպատակով, ամբաստանյալ Գ. Յովհաննիսյանը վերջիններիս ներգրավել է հարկադիր աշխատանքի մեջ: Նրանց պարտադրել է Վ.Իշխանյանի հետ միասին Երևան քաղաքի Աբովյան, Նալբանդյան, Թումանյան և այլ փողոցներում զբաղվել մուրացկանությամբ և վաստակած գումարները հանձնել իրեն:

Շարունակելով իր հանցավոր գործունեությունը, 2008 թվականի մայիս-հունիս ամիսներին, ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանը տուժող Վ.Իշխանյանի միջոցով, ծանոթացել է նաև գործով տուժող, տասներեքամյա, Երևանի «Վարդաշեն» թիվ 1 կրթահամալիրի սան Ալբերտ Վարդանի Յովհաննիսյանի հետ , և նրան գիշերելու համար նույն հասցեում ժամանակավոր կացարան տրամադրելու պայմանով, օգտագործելով Ալբերտ Յովհաննիսյանի վիճակի խոցելիությունը, նրան բնակարանից վտարելու և կամքին հակառակ դպրոց ուղարկելու ճնշման տակ, նյութական շահ ստանալու նպատակով, վերջինիս ներգրավել է հարկադիր աշխատանքի մեջ՝ պարտադրելով Վահան Իշխանյանի հետ միասին Երևան քաղաքի տարբեր փողոցներում զբաղվել մուրացկանությամբ և վաստակած գումարները հանձնել իրեն:

### **3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը**

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ բողոքում ամբաստանյալը, իրեն մեղավոր չճանաչելով ՀՀ քր. օր.-ի 132-<sup>1</sup> հոդ.-ի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված հանցանքում, գտնելով, որ դատարանը իրեն անհիմն կերպով է դատապարտել նշված հոդվածով, դա պատճառաբանում է հետևյալ կերպ:

Ինքը անչափահասներին մուրացկանության մեջ չի ներգրավել, նրանք մինչև իր հետ ծանոթանալը արդեն մուրացկանության համար ուղարկված են եղել հատուկ դպրոց և անկախ իր հետ ունեցած հետագա փոխհարաբերություններից, նրանք զբաղվում էին մուրացկանությամբ և կշարունակվեին զբաղվել:

Ինքը անչափահասներից որևէ շահ չի ունեցել, նրանք մնացել են իրենց բնակարանում, սնվել են իրենց հետ միասին, նրանց գումարները երբեմն ծախսվել են հենց իրենց սննդի համար, մեկ-մեկ էլ իրեն պարտքով փող են տվել, որը ինքը վերադարձրել է:

Ինքը անչափահասների նկատմամբ որևէ բռնություն չի գործադրել, անչափահասները մնացել են իրենց տանը՝ որպես իրենց ընտանիքի անդամներ:

Վերաքննիչ դատարանից խնդրել է վերանայել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 02.04.2009թ.՝ իր նկատմամբ կայացված դատավճիռը, իսկ դատապարտելու դեպքում՝ «դատել այն բանի համար, ինչ որ ես իրոք կատարել եմ, իսկ եթե մուրացկան անչափահասներին մեր հարկի տակ պահելը և իմանալը, որ նրանք մուրացկանությամբ են զբաղվում, դիտվում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն և ես պետք է դրա համար պատժվեմ, ապա դատավճիռ կամ որոշում կայացնելիս խնդրում եմ հաշվի առնել այդ հանգամանքը և ինձ չդատել ԶԶ քր. օր.-ի 132<sup>-1</sup>-րդ հոդվածով»:

Նաև խնդրել է հաշվի առնել իր պաշտպանի պաշտպանական ճառում բերված թեզիսները, իր բողոքում բերված փաստարկները որպես հիմնավորում, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն ընդունվել և հետագոտվել առաջին ատյանի դատարանում:

### **Դատախազի գրավոր պատասխանը**

Վերաքննիչ բողոքի դեմ ներկայացված գրավոր պատասխանում մեղադրողը, գտնելով, որ ամբաստանյալի վերաքննիչ բողոքը անհիմն է, նպատակ է հետապնդում խուսափել քրեական պատասխանատվությունից և պատժից, հետևաբար, վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 02.04.2009թ. դատավճիռը թողնելով անփոփոխ:

Թրաֆիքինգը, ինչպես նաև կազմակերպված հանցագործության մյուս ձևերը, շահույթ հետապնդող հանցագործության առավել վտանգավոր տարատեսակներից է, որի դեմ պայքարը այսօր աշխարհի շատ երկրների և միջազգային հանրության հիմնախնդիրներից է:

ԶԶ օրենսդրությունը մարդկանց շահագործման օրենսդրական ձևակերպումը տվել է ԶԶ քրեական օրենսգրքի 132<sup>-1</sup>-րդ հոդվածով, որով քրեական պատասխանատվություն է սահմանել մարդկանց շահագործման համար: Մարդու շահագործման ձևերից է երեխաների շահագործումը, կամ նրանց ներգրավումը հակահասարակական այս կամ այն գործունեության մեջ: Անչափահասի հոգեկան աշխարհը առանձնանում է դիմամիզմով, որը նրան հավասարաչափ ընկալունակ է դարձնում ինչպես սոցիալական դրական, այնպես էլ նեգատիվ երևույթների ողջ ներգործությունների նկատմամբ: Դրա պատճառը դեռահասության շրջանի բնութագրական առանձնահատկություններն են՝ անցումային տարիքի հոգեբանական բեկումը, կայուն բարոյական դիրքերի չձևավորվածությունը, բազմաթիվ երևույթների ոչ համարժեք մեկնաբանությունները, բարձր հակվածությունը խմբային ներգործությունների նկատմամբ, անհավասարակշիռ վարքը, բարձր խոցելիությունը, ինքնուրույնության ձգտումը:

Իր գրավոր պատասխանը հիմնավորելու համար դատախազը հղումներ է կատարում, մասնավորապես, «Երեխայի իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի 20.11.1989թ. Կոնվենցիայի 32-րդ հոդվածի, «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ՄԱԿ-ի 17.06.1999թ. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի», «Չարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» 28.06.1930թ. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի վրա:

Վերաքննիչ բողոքի դեմ ներկայացված գրավոր պատասխանում դատախազը, իր անհամաձայնությունը հայտնելով ամբաստանյալի կողմից ԶԶ քր. օր.-ի 132<sup>-1</sup>-րդ հոդվածով իրեն մեղավոր չճանաչելու կապակցությամբ, ենթադրելով, որ ամբաստանյալը իրեն մեղավոր է ճանաչում ԶԶ քր. օր.-ի 166-րդ հոդվածով նախատեսված հանցանքում, վերլուծում է ԶԶ քր. օր.-ի 166-րդ և 132<sup>-1</sup>-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հանցակազմերը, այն համեմատության մեջ դնում քրեական գործի փաստական հանգամանքների հետ, նշում, որ ամբաստանյալ Գ. Յովհաննիսյանը սպառնալիքի ձևով, հակաիրավական

եղանակ կիրառելով, երեխաներին ներգրավել է մուրացկանության մեջ և տիրացել հարկադիր աշխատանքի արդյունքում ստացված եկամուտներին:

Գտնելով, որ դատավճիռ կայացնելիս առաջին ատյանի դատարանը հաշվի է առել արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները, ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսդրության պահանջները, կայացրել է օրինական, հիմնավորված, պատճառաբանված դատավճիռ, խնդրել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 02.04.2009թ. դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի Գարիկ Հենրիկի Հովհաննիսյանի ՀՀ քր. օր.-ի 132-<sup>1</sup> հդ.-ի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով՝ թողնել անփոփոխ, իսկ ամբաստանյալի վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

#### **4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վերաքննիչ դատարանում ամբաստանյալ Գ. Հովհաննիսյանը ՀՀ քր. օր.-ի 132-<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չճանաչեց և հիմնավորելով իր վերաքննիչ բողոքը հայտնեց, որ 2006թ.-ին ծանոթացել է Լիանուշ Միրզոյանի հետ և տեղափոխվել բնակվելու վերջինիս տանը՝ Շիրակի փողոցի թիվ 2ա շենքի թիվ 727 սենյակում՝ վարելով փաստական ամուսնական կյանք: Այդ ընթացքում ինքը ձեռք է բերել «Գազ» 31105 մակնիշի 05 SL 453 պետհամարանիշի ավտոմեքենա, որը Երևանում շահագործել է որպես «տաքսի»: Ծանոթացել է Լ. Միրզոյանի որդու՝ Վահան Իշխանյանի, վերջինիս ընկերներ Ալբերտ Հովհաննիսյանի, Մերաբ Բժանիայի, Արման Հակոբյանի, Հովհաննես Պողոսյանի հետ, որոնց հաճախ Երևանի Ամիրյան, Աբովյան փողոցներում նկատել է մուրացկանությամբ զբաղվելիս, ծաղիկ վաճառելիս: Եղել են դեպքեր, որ Ա. Հակոբյանը, Ա. Հովհաննիսյանը և Մ. Բժանիան ուշ երեկոյան եկել են իրենց տուն և գիշերել այնտեղ:

Նշել է, որ երեխաներին երբեք չի ստիպել զբաղվել մուրացկանությամբ և նրանցից գումար չի պահանջել, միայն, երբեմն երեխաներից պարտքով գումար է վերցրել: Երեխաների համար սնունդ է գնել, թույլ է տվել գիշերել վկա Լիանուշ Միրզոյանի տանը:

Ամբաստանյալ Գ. Հովհաննիսյանը փաստորեն ընդունեց, որ տեղյակ է եղել, որ տուժողները զբաղվում են մուրացկանությամբ, բացակայում են կրթահամալիրից, որի իրավունքը չունեն, թույլատրել է գիշերել իրենց տանը և իմանալով, որ վերջիններս գումար են հավաքում մուրացկանությամբ՝ նրանցից պարտքով գումար է վերցրել:

Վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով ամբաստանյալի կողմից իր վերաքննիչ բողոքի հիմնավորման կապակցությամբ բերված փաստարկները, պաշտպանի դիրքորոշումը, դատախազի պատասխանը, ստուգելով ապացույցների ձեռքբերման աղբյուրները, քրեական գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց վերլուծելով վերաբերելիության, թույլատրելիության քրեադատավարական պահանջների, ապացույցների ողջ համակցությունը՝ քրեական գործի լուծման համար բավարարության տեսակետից, ներքին համոզմամբ՝ հանգում է այն հետևության, որ Գարիկ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի փաստարկների և դատարանում բերված պատճառաբանությունների այն մասը, որով նա հերքում է իր կողմից ՀՀ քր. օր.-ի 132-<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված հանցանքի կատարումը, մտացածին են, հավաստի չեն, նպատակ են հետապնդում խուսափել ՀՀ քր. օր.-ի 132-<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված հանցանքի կատարման համար նախատեսված պատժից, նրա կողմից ՀՀ քր. օր.-ի 132-<sup>1</sup>-րդ 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված հանցանքը

կատարելը և նրա մեղքը հաստատված, իսկ պատճառաբանությունները հերքված են քրեական գործով ձեռք բերված հետևյալ ապացույցներով:

Տուժող, դեռահաս տասնչորսամյա Վահան Աշոտի Իշխանյանի ցուցմունքով այն մասին, որ սովորում է «Վարդաշենի» թիվ 1 հատուկ դպրոցում: Գարիկ Յովհաննիսյանը հանդիսանում է իր մոր երկրորդ ամուսինը, որը 2006թ. բնակվում է իրենց հետ միասին: Ճանաչում է տուժողներ Ալբերտ Յովհաննիսյանին, Արման Յակոբյանին, Մ. Բժանիային Յ.Պողոսյանին որոնց իրենց տանը ծանոթացրել է ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանի հետ: Ինքը, Արման Յակոբյանը, Ալբերտ Յովհաննիսյանը, Մ. Բժանիայան ու Յ.Պողոսյանը Երևան քաղաքի փողոցներում զբաղվել են մուրացկանությամբ:

Եղել են դեպքեր, որ Ա. Յովհաննիսյանն ու Ա. Յակոբյանը գիշերել են իրենց տանը: Այդ օրերին ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանը իր ավտոմեքենայով իրենց տեղափոխել է Երևանի Օպերայի շենքի մոտակայք, որտեղ իրենք ծաղիկ են վաճառել: Իսկ ուշ գիշերը Գ. Յովհաննիսյանը իրենց տեղափոխել է տուն: Իր հետ փող է հավաքել նաև վկա Դավիթ Յովհաննիսյանը:

Տուժող Վ.Իշխանյանը հայտնեց նաև, որ Գարիկ Յովհաննիսյանը տուժողներին չի ստիպել մուրացկանությամբ գումար հավաքել և տալ իրեն:

Տուժող Վ.Իշխանյանը փաստորեն ցուցմունքում հաստատել է, որ տուժողներ Ա.Յակոբյանը, Մ. Բժանիայան, Յ.Պողոսյանը, Ա.Յովհաննիսյանը, ժամանակ առ ժամանակ, օրերով դասերից փախչել և դպրոց հաճախելուց խուսափելու նպատակով, մնացել են իրենց տանը, ինքը վերջիններիս ու Դ.Յովհաննիսյանի հետ զբաղվել է մուրացկանությամբ: Երբ տուժողները գտնվել են իրենց տանը, ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանը ամեն օր իր ավտոմեքենայով առավոտյան նրանց տարել է Երևանի կենտրոն ու ուշ գիշերը բերել տուն, սակայն պնդեց, որ Գ.Յովհաննիսյանը իրենց չի ստիպել մուրացկանություն անել և հավաքած գումարները հանձնել իրեն: Իրենք նրան գումար չեն տվել:

Իրավական ստուգման և գնահատության ենթարկելով տուժող Վ. Իշխանյանի ցուցմունքը՝ քրեական գործով ձեռք բերված ապացույցների ողջ համակցությամբ, Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, միանգամայն հիմնավոր կերպով եզրակացրել է, որ տուժող Վ. Իշխանյանի ցուցմունքի այն մասը, որով նա պնդում է, որ ամբաստանյալ Գ.Յովհաննիսյանը իրեն ու մյուս տուժողներին, իրենց վիճակի խոցելիությունն օգտագործելով, մուրացկանությամբ զբաղվելուն չի հարկադրել, անարժանահավատ են, նկատի ունենալով, որ Գարիկ Յովհաննիսյանը հանդիսանում է նրա խորթ հայրը՝ Լ.Միրզոյանի փաստական ամուսինը, որպես դեռահաս նա գտնվում է ինչպես մոր՝ Լ.Միրզոյանի, այնպես էլ ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանի ազդեցության տակ և նման ցուցմունք տալով՝ փորձում է հովանավորել վերջինիս:

Տուժող դեռահաս, տասներեքամյա Ալբերտ Վահանի Յովհաննիսյանի ցուցմունքով այն մասին, որ սովորում է «Վարդաշենի» թիվ 1 հատուկ դպրոցում: Տուժող Վահան Իշխանյանի հետ Երևանում զբաղվել են մուրացկանությամբ: 2008թ. մարտ-ապրիլ ամիսներին գնացել է Վահան Իշխանյանենց բնակարան: Ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանը իմանալով, որ զբաղվում է մուրացկանությամբ, առաջարկել է այսուհետ մուրացկանությամբ հավաքած գումարները հանձնել իրեն, որպեսզի փակի գնած ավտոմեքենայի պարտքերը: Ինքը Գ.Յովհաննիսյանին չի մերժել, քանի որ վախեցել է նրա պահվածքից, դաջվածքներից ու մտածել է, որ նա կարող է զայրանալ և ծեծել իրեն: Դրանից հետո, մոտ 25 օր, մնացել է Գարիկ Յովհաննիսյանենց տանը և այդ ընթացքում, ամեն առավոտ Գ. Յովհաննիսյանը իրեն և Վ. Իշխանյանին ավտոմեքենայով տեղափոխել է Երևանի Ամիրյան, Աբովյան փողոցներ, որտեղ իրենք մուրացկանությամբ դրամ են հավաքել: Ուշ գիշերը՝ ժամը 24.00-ի, 01.00-ի սահմաններում Գ.Յովհաննիսյանը ավտոմեքենայով իրեն տարել է տուն և իրենցից վերցրել մուրացկանությամբ

հավաքած գումարը, որը օրական կազմել է 10-15 հազար ՀՀ դրամ: Երբեմն Վ.Իշխանյանը գնացել է դպրոց, Գ. Հովհաննիսյանը իրեն միայնակ է տարել մուրացկանության: Հավաքած գումարը Գ. Հովհաննիսյանին է հանձնել կամ Վ.Իշխանյանի միջոցով կամ անձամբ: Ամբաստանյալ Գ. Հովհաննիսյանը իր ծառայությունների դիմաց համաձայնվել է թույլ տալ մնալու իրենց տանը, կերակրել և պաշտպանել, որպեսզի իրեն ոչ մեկը չծեծի կամ չնեղացնի:

Եղել են դեպքեր, երբ չի ցանկացել մուրացկանությամբ զբաղվել, այդ ժամանակ Գ. Հովհաննիսյանը զայրացել է և ասել, որ պետք է գնա գումար բերի: 2008թ. հունիսի կեսերին, մի անգամ, փորձել է հավաքած գումարը չտալ Գ. Հովհաննիսյանին, ասելով, որ այլևս նրա համար գումար չի հավաքելու, վերջինս երեք անգամ հարվածել է իր ձեռքին ու մեջքին: Ինքը, վատ զգալով, փորձել է փախչել, Գ. Հովհաննիսյանը ավտոմեքենայով հետապնդել, ստիպողաբար մտցրել է ավտոմեքենան և տարել տուն: Գնել է «Նոկիա» տեսակի հեռախոս, որը վկա Լ.Միրզոյանը վերցրել է և տվել Գ. Հովհաննիսյանին: Վերջինս վախեցրել, գոռացել է իր վրա, ասել, որ եթե փող չբերի՝ իր համար շատ վատ կլինի: Ինքը վախեցել է նրա խռպոտ ձայնից և դաջվածքներից, մտածել է, որ նա հանցագործ է և մերժելու դեպքում՝ իրեն վնաս կտա: Քիչ փող հավաքելու դեպքում Գ. Հովհաննիսյանը զայրացել է: Վերջինս իր թույլ տեղը գտել է, իմացել է, որ չի ցանկանում դպրոց գնալ և ստիպել է մուրացկանություն անել և սպառնացել է՝ փող չհավաքելու դեպքում տանից վռնդել և ուղարկել դպրոց, պահանջել է նաև, որ դպրոցում չասի իրենց տանը մնալու մասին:

Տուժող Ա.Հովհաննիսյանը նաև հայտնեց, որ Արման Հակոբյանից տեղեկացել է, որ Գարիկ Հովհաննիսյանի պահանջով նա ևս վաղուց մուրացկանությամբ դրամ է հավաքել և տվել նրան: Ա.Հովհաննիսյանը նաև հայտնեց, որ դատաքննության ժամանակ նախաքննական ցուցմունքներից հրաժարվել է վկա Լիանուշ Միրզոյանի պահանջով: Հետագայում դատարանում ճիշտ ցուցմունք է տվել և պնդել նախաքննական ցուցմունքները:

Տուժող դեռահաս, տասներկուամյա Արման Անդրանիկի Հակոբյանի նախաքննության և դատաքննության ժամանակ տված ցուցմունքներով այն մասին, որ սովորում է «Վարդաշեն» թիվ 1 հատուկ դպրոցի 6-րդ դասարանում: 2007թ. նույն դպրոցի սան, տուժող Վահան Իշխանյանենց տանը ծանոթացել է ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանի հետ: Վերջինս տեղեկանալով, որ երբեմն զբաղվում է մուրացկանությամբ ստիպել է այսուհետ մուրացկանությամբ հավաքած գումարները տալ իրեն, որպեսզի մեքենան վերանորոգի: 2007-2008 թվականներին պարբերաբար դպրոցից փախչել է ու բնակվել Վահան Իշխանյանենց տանը: Ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանը իրեն և Վ.Իշխանյանին ավտոմեքենայով ամեն օր առավոտյան տեղափոխել է Երևան քաղաքի կենտրոնական հատված, որտեղ իրենք մուրացկանությամբ գումար են հավաքել, իսկ գիշերը եկել է իրենց հետևից ու տարել տուն: Մուրացկանությամբ յուրաքանչյուրի կողմից օրական հավաքած 10-15 հազար դրամ գումարը, ինքը և Վ.Իշխանյանը տվել են ամբաստանյալ Գ. Հովհաննիսյանին: Նա պահանջել է, որպեսզի հավաքած գումարը 10 հազար դրամից քիչ չլինի, և այդ դեպքում զայրանում էր իրենց վրա: Իսկ երբ հանձնում էին 20.000-25.000 ՀՀ դրամ՝ նա իրենց համար ուտելիքներ էր գնում:

Եղել են դեպքեր, որ ինքը չի ցանկացել մուրացկանությամբ զբաղվել, սակայն ամբաստանյալ Գ. Հովհաննիսյանն իր վրա զայրացել է, ու ինքը նորից, վախենալով, շարունակել է զբաղվել մուրացկանությամբ: Հավաքած գումարները հանձնելու դիմաց ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանը թույլ է տվել դպրոց չհաճախել և մնալ իրենց տանը: Այլապես իրենց տանը չէին պահի:

Առանձին օրերի, երբ տուժող Վ.Իշխանյանը գտնվել է դպրոցում, ինքը միայնակ մուրացկանությամբ հավաքած գումարը հանձնել է ամբաստանյալ Գ. Հովհաննիսյանին: Մուրացկանություն է արել ու գումարները տվել ամբաստանյալ Գ.

Հովհաննիսյանին, որովհետև վախեցել է Գարիկ Հովհաննիսյանի ձեռքի «Կարիճի» դաջվածքից, որ կգայրանա, տանից դուրս կանի, կծեծի:

Շատ անգամ, երբ այլևս չի ցանկացել մուրացկանությամբ զբաղվել, և որոշել է գնալ դպրոց, ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանը թույլ չի տվել, գայրացել է, ասել, թե դա դպրոց չէ՝ այլ գաղութ, վախեցել է և ստիպված ենթարկվել նրան: Որոշել է մուրացկանությամբ չզբաղվել և դադարեցրել է այդ գործողությունները: Սակայն, երբ Երևանում, Վ.Իշխանյանի մասին տեղեկություն ստանալու նպատակով, 2008թ. հուլիսի սկզբներին, զանգել է Գարիկ Հովհաննիսյանին, նա անմիջապես Օպերայի շենքի մոտ հանդիպել է իրեն, ավտոմեքենայով տարել Երևանի Աբովյան փողոց՝ Վ.Իշխանյանի մոտ, ստիպել է, որ նրա հետ միասին շարունակի մուրացկանություն անել: Ինքը վախեցել է, չի հակաճառել նրան: Դրանից հետո ևս 10 օր Վ.Իշխանյանի հետ միասին մուրացկանություն է արել և գումարը տվել Գ. Հովհաննիսյանին: 2008թ. հուլիսի 10-11-ին ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանը և Վ.Իշխանյանի մայր Լ.Միրզոյանը եկել են Նուբարաշենի հանրակրթարան և իրեն սպառնացել, որ եթե ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանի արարքների մասին ոստիկանությանը տեղյակ պահի, իր համար շատ վատ կլինի:

Ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանի պահանջով, իր հետ միասին և երբեմն առանձին, մուրացկանություն է արել և հավաքած գումարը Գարիկ Հովհաննիսյանին է փոխանցել նաև Նուբարաշենի կրթահամալիրի սան Մերաբ Բժանիյան: Տեղյակ է, որ ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանի պահանջով, նրա համար մուրացկանությամբ գումար է հավաքել նաև տուժող Ալբերտ Հովհաննիսյանը:

Տուժող Ա.Հակոբյանը հայտնել է, որ եթե չլիներ Գարիկ Հովհաննիսյանի պահանջը և հրաժարվեր իրենց տանը պահել, ինքը մուրացկանություն չէր անի և ստիպված դպրոց կհաճախեր:

Տուժող անչափահաս, տասնվեցամյա Մերաբ Անատոլիի Բժանիայի ցուցմունքներով այն մասին, որ սովորում է «Նուբարաշենի» թիվ 18 հատուկ դպրոցում, որտեղ ծանոթացել և մտերմացել է նույն դպրոցի սան Հովհաննես Պողոսյանի հետ: 2007թ. սեպտեմբերին տուժող Վահան Իշխանյանենց տանը ծանոթացել է ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանի հետ: Վերջինս իրեն չի հարկադրել մուրացկանությամբ զբաղվել և հավաքած գումարը տալ նրան: Նախաքննական ցուցմունքները տվել է, գայրացած է եղել Գարիկ Հովհաննիսյանի վրա՝ լողավազանում լողալու առիթով իր վրա բարկանալու պատճառով:

Տուժող Մ. Բժանիյան նախաքննական ցուցմունքում մասնավորապես հայտնել է, որ ամբաստանյալ Գ.Հովհաննիսյանը իրեն և Հ. Պողոսյանին առաջարկել է մուրացկանությամբ հավաքած գումարները տալ իրեն, որպեսզի կարողանա վճարել ավտոմեքենայի պարտքը: Դրա դիմաց Գ.Հովհաննիսյանը խոստացել է հոգալ իրենց մասին, թույլ տալ գիշերելու իրենց տանը, ինքը և Հ.Պողոսյանը համաձայնվել են: Այդ օրվանից սկսած մոտ 20 օր ինքը և Հ.Պողոսյանը մնացել են Գարիկ Հովհաննիսյանի տանը, ու ամեն առավոտ Գարիկ Հովհաննիսյանը իրեն, Հ.Պողոսյանին, Վ.Իշխանյանին ավտոմեքենայով տարել է Երևանի տարբեր փողոցներ, որտեղ իրենք մուրացկանությամբ դրամ են հավաքել, իսկ գիշերվա 24.00-ի սահմաններում Գ. Հովհաննիսյանը եկել է իրենց ետևից ու ավտոմեքենայով տարել տուն՝ ճանապարհին վերցնելով հավաքած ամբողջ գումարը: Գարիկ Հովհաննիսյանը պահանջել է օրական իրեն տալ 10. 000 ՀՀ դրամից ոչ պակաս գումար, իսկ պակասի դեպքում իրեն սպառնալիքներ է տվել, գայրացել է, նաև մի քանի անգամ բռուցքներով ծեծի է ենթարկել՝ հարվածելով դեմքին ու մեջքին: Վախեցրել է, ասելով. «Եթե ինձ համար փող չհավաքես, կմտցնեմ մեքենայի բազաժնիկը, կտանեմ և կզցնեմ ձորը, ու չեք կարա դուրս գաք և այլն», վախից զբաղվել է մուրացկանությամբ ու հավաքած գումարը տվել է Գարիկ Հովհաննիսյանին: Եղել է դեպք, որ իր ներկայությամբ վերջինս քիչ փող հավաքելու համար ծեծել է Վ.Իշխանյանին և Հ.Պողոսյանին:

Տեղյակ է, որ Գարիկ Յովհաննիսյանի համար մուրացկանությամբ դրամ է հավաքել նաև տուժող Արման Յակոբյանը:

Վերաքննիչ քրեական դատարանը հիմնավոր է համարում առաջին ատյանի դատարանի կողմից տուժող Մ. Բժանիյայի՝ նախաքննական ցուցմունքը արժանահավատ լինելու գնահատականը, քանի որ դատաքննության ընթացքում տուժող Մ. Բժանիյայի, ինչպես նաև՝ մյուս տուժողների վրա հնարավոր ազդեցություն են գործադրել վկա Լ. Միրզոյանը և ամբաստանյալ Գ. Յովհաննիսյանի մերձավորները:

Տուժող Յովհաննես Աշոտի Պողոսյանի ցուցմունքով այն մասին, որ Գավառի մանկատանը ծանոթացել է տուժող Մերաբ Բժանիյայի հետ: Յետագայում միասին սովորել են «Նուբարաշենի» թիվ 18 հատուկ դպրոցում:

2007թ. սեպտեմբեր ամսին, Մերաբ Բժանիյայի հետ, տուժող Վահան Իշխանյանենց տանը, ծանոթացել են ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանի հետ: Նա տեղեկանալով, որ զբաղվում են մուրացկանությամբ, առաջարկել է մուրացկանությամբ հավաքած գումարները տալ իրեն, որպեսզի կարողանա վճարել ավտոմեքենայի պարտքը, փոխարենը խոստանալով՝ թույլ տալ գիշերել իրենց տանը: Յաջորդ օրը ինքը, Վ.Իշխանյանը և Մ.Բժանիյան մուրացկանությամբ հավաքել են 5.000 ՀՀ դրամ: Երեկոյան 1.000 ՀՀ դրամ վճարել են տաքսուն ու տուն գնացել, 4.000 ՀՀ դրամը տվել ամբաստանյալ Գ. Յովհաննիսյանին: Վերջինս զայրացել է քիչ գումար հավաքելու համար ու տանից դուրս արել: Յաջորդ օրը հանդիպել է Վ.Իշխանյանին, մուրացկանություն արել ու գնացել նրանց տուն: Հավաքած ամբողջ գումարը 10.000 ՀՀ դրամ տվել են Գ.Յովհաննիսյանին: Դրանից հետո մոտ 20 օր ինքը և Մ.Բժանիյան մնացել են Գարիկ Յովհաննիսյանի տանը: Ամեն առավոտ Գ.Յովհաննիսյանը իրեն, Մ. Բժանիյանին և Վ. Իշխանյանին ավտոմեքենայով տարել է Երևանի տարբեր փողոցներ, որտեղ իրենք մուրացկանությամբ դրամ են հավաքել, իսկ գիշերը եկել է իրենց հետևից ու ավտոմեքենայով տարել տուն՝ ճանապարհին վերցնելով հավաքած ամբողջ գումարը, որը օրեկան կազմել է 7.000-10.000 ՀՀ դրամ: Գարիկ Յովհաննիսյանենց տանը բնակվելու ընթացքում վերջինս իրենց սպառնալիքներ է տվել՝ մուրացկանությամբ քիչ գումար հավաքելու համար: Եղել են դեպքեր, որ մուրացկանությամբ քիչ գումար հավաքելու համար Գ. Յովհաննիսյանն իրեն տանից վռնդել է: Վերջինիս պահանջով զբաղվել է մուրացկանությամբ և հավաքած գումարները տվել նրան, որովհետև վախեցել է նրանից, քանի որ շատ անգամ իր ներկայությամբ Գ. Յովհաննիսյանը ծեծի է ենթարկել վկա Լ.Միրզոյանին, մտավախություն է ունեցել, որ կարող է իրեն ևս ծեծել: Իր վրա ևս զայրացել է, ծեծել, սպառնացել է.« Խելոք մնա, թե չէ կծեծեն, գլուխդ կջարդեն»: Ձգացել է, որ Վ.Իշխանյանը և Մ.Բժանիյան ևս Գարիկ Յովհաննիսյանից վախենում և կատարում էին նրա կամքը: Մ.Բժանիյան նույնպես մուրացկանությամբ հավաքած փողը տվել է Գարիկ Յովհաննիսյանին՝ որպեսզի կարողանա գիշերել նրանց տանը, եթե փող չհավաքեին Գարիկ Յովհաննիսյանը տուն չէր թողնի:

Նշել է նաև, որ Գարիկ Յովհաննիսյանի պահանջով «Մալաթիայի» մրգի և բանջարեղենի շուկայից իրենք բնամթերքներ են մուրացել: Յ.Պողոսյանը նաև հայտնեց, որ դատաքննության ժամանակ նախաքննական ցուցմունքները փոխել է վկա Լիանուշ Միրզոյանի պահանջով: Յետագայում դատարանում ճիշտ ցուցմունք է տվել և պնդել նախաքննական ցուցմունքները :

Վկա, տուժող Վահան Իշխանյանի մայր Լիանուշ Կոլյայի Միրզոյանի ցուցմունքներով այն մասին, որ ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանի հետ գտնվում է փաստական անուսնական հարաբերությունների մեջ: Վերջինս բնակվել է իրենց տանը: Որդու՝ Վահան Իշխանյանի ընկերներ Արման Յակոբյանը, Ալբերտ Յովհաննիսյանը, Յովհաննես Պողոսյանը, Մերաբ Բժանիյան հաճախ փախել են դասերից և տարբեր ժամանակահատվածներում բնակվել իրենց տանը: Նրանց մոտ գումարներ է տեսել:

Հետագայում իմացել է, որ նրանք գումարները վաստակել են մուրացկանությամբ: Այդ ընթացքում Գարիկ Յովհաննիսյանը Վ. Իշխանյանին, Ա. Հակոբյանին, Մ.Բժանիային և Ա. Յովհաննիսյանին առավոտյան իր վարած ավտոմեքենայով տեղափոխել է Երևանի կենտրոնական հատված և գիշերը նրանց ետ բերել տուն: Վեց-յոթ անգամ եղել են դեպքեր, երբ Ա. Հակոբյանը և Ա. Յովհաննիսյանը իր ներկայությամբ ամեն անգամ 3-4 հազար ՀՀ դրամ են տվել Գ.Յովհաննիսյանին, որով նա գազ է լիցքավորել ավտոմեքենան: Նաև եղել են դեպքեր, որ Գ.Յովհաննիսյանը երեկոյան իր հետ սնունդ է բերել տուն և հայտնել, որ այն գնել է Ալբերտ Յովհաննիսյանի տված գումարով:

Նշել է, որ ինքը տեղյակ չի եղել, որ երեխաները զբաղվում են մուրացկանությամբ և հավաքած գումարը հանձնում Գ. Յովհաննիսյանին, այդ մասին ինքը իմացել է ոստիկանությունում:

Երիշտ է նաև առաջին ատյանի դատարանի կողմից վկա Լ. Միրզոյանի ցուցմունքների՝ մասնակի արժանահավատ լինելու վերաբերյալ գնահատականը, միայն այն մասով, որ տուժողներ Վ. Իշխանյանը, Ա. Յովհաննիսյանը, Ա. Հակոբյանը, Մ. Բժանիայան զբաղվել են մուրացկանությամբ, հավաքած գումարները տվել են և իրեն, և ամբաստանյալ Գ. Յովհաննիսյանին, իսկ ցուցմունքների մնացած մասը այն մասին, որ տեղյակ չի եղել, որ Գարիկ Յովհաննիսյանի հարկադրանքով են տուժողները զբաղվել մուրացկանությամբ և հավաքած գումարները տվել նրան և դրա դիմաց է տուժողներին թողել իրենց տանը գիշերել և սնվել, դատարանը արժանահավատ չի համարում, քանի որ վկա Լ.Միրզոյանը դրանով ցանկանում է հովանավորության տակ վերցնել փաստական ամուսնուն: Դրա մասին է վկայում նաև տուժողների ցուցմունքները, որ Գարիկ Յովհաննիսյանի օգտին ցուցմունք տալուն հարկադրել է Լ.Միրզոյանը:

Վկա Լ.Միրզոյանը ընդունել է, որ իրոք տուժող Ա.Յովհաննիսյանից վերցրել է նրա բջջային հեռախոսը, փոխանցել ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանին և չի վերադարձրել:

Վկա Լ.Միրզոյանը, նախաքննության ընթացքում, 2008թ. դեկտեմբերի 03-ին ցուցմունք է տվել, որ Գարիկ Յովհաննիսյանն իր վարած ավտոմեքենայի դիմաց որպես վարձավճար ավտոմեքենայի տիրոջը տվել է օրական 5.000 ՀՀ դրամ: Չնայած տևական ժամանակ այդ ավտոմեքենան չի օգտագործվել և չի աշխատել, եկամուտ չի ունեցել, սակայն երեխաների հավաքած և նրանցից վերցրած գումարների հաշվին Գարիկ Յովհաննիսյանը վճարել էր ավտոմեքենայի տիրոջ պարտքերը՝ օրական 5.000 ՀՀ դրամը փոխանցել է ավտոմեքենայի տիրոջը: Նա հայտնել է նաև, որ քանի որ իրենց գումար էր անհրաժեշտ եղել, Գարիկ Յովհաննիսյանը Վ.Իշխանյանին, Ա.Հակոբյանին, Ա.Յովհաննիսյանին խնդրել էր՝ գումարով օգնել, և իրեն հայտնի է, որ ավտոմեքենայի պարտքերը մարելու համար նրանք գումար են տվել: Տեսել է նաև, որ նրանք գումար են տվել Գարիկ Յովհաննիսյանին, սակայն իրենց կամքով:

Լ.Միրզոյանի վերոհիշյալ ցուցմունքով դատարանը հիմնավորված է համարում, որ ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանը տուժողների մուրացկանությամբ ձեռք բերած և իր կողմից վերցրած գումարները ծախսել է իր անձնական կարիքների համար և տուժողներին ներգրավել է հարկադիր աշխատանքի:

Վկա Դավիթ Տիգրանի Յովհաննիսյանի ցուցմունքով այն մասին, որ սովորում է «Վարդաշենի» թիվ 1 հատուկ դպրոցում և ճանաչում է Վահան Իշխանյանին, Արման Հակոբյանին և Ալբերտ Յովհաննիսյանին: Շատ են եղել դեպքեր, որ ինքը Արման Հակոբյանի և Ալբերտ Յովհաննիսյանի հետ միասին գիշերել է Վահան Իշխանյանենց տանը: Այնտեղ ծանոթացել է ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանի հետ: Վահան Իշխանյանենց տանը գիշերելուց հետո, առավոտյան Գարիկ Յովհաննիսյանն իրեն և Ալբերտ Յովհաննիսյանին ավտոմեքենայով տեղափոխել է Երևանի Նալբանդյան փողոց, որտեղ Ալբերտ Յովհաննիսյանը սկսել է մուրացկանությամբ դրամ հավաքել: Օրվա վերջում Գարիկ Յովհաննիսյանը եկել է նույն վայրը, ու իր ներկայությամբ

Ալբերտ Յովհաննիսյանը նրա պահանջով մուրացկանությամբ հավաքած 2.400 ՀՀ դրամ գումարը հանձնել է Գարիկ Յովհաննիսյանին: Բացի այդ, ևս մեկ անգամ, 2008թ. ապրիլի 1-ի երեկոյան, ականատես է եղել, որ Ալբերտ Յովհաննիսյանը մուրացկանությամբ հավաքած գումարը հանձնել է Գարիկ Յովհաննիսյանին:

Հետագայում Ալբերտ Յովհաննիսյանը և Արման Հակոբյանը իրեն պատմել են, որ բազմաթիվ անգամ Գարիկ Յովհաննիսյանը ավտոմեքենայով իրենց տեղափոխել է Երևան քաղաքի տարբեր հատվածներ, որտեղ նրանք մուրացկանությամբ դրամ են հավաքել և օրվա վերջում հանձնել Գարիկ Յովհաննիսյանին :

Վկա Ստեփան Յովհաննեսի Ղամբարյանի ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է «Վարդաշեն» թիվ 1 հատուկ դպրոցի փոխտնօրենը:

Ճանաչում է թիվ 1 կրթահամալիրի սան Վահան Իշխանյանի մոր ընկերոջը՝ Գարիկ Յովհաննիսյանին: Արման Հակոբյանը և Ալբերտ Յովհաննիսյանն իրեն պատմել են, որ դասերից պարբերաբար բացակայելու ընթացքում բնակվել են Վահան Իշխանյանի տանը: Այնտեղ բնակվելու ժամանակահատվածում ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանն ավտոմեքենայով առավոտյան իրենց տեղափոխել է Երևանի տարբեր փողոցներ, որտեղ իրենք Գարիկ Յովհաննիսյանի պահանջով, վախենալով նրանից և ենթարկվելով նրան, զբաղվել են մուրացկանությամբ և հավաքած գումարները գիշերը հանձնել նրան: Իմանալով այդ մասին՝ նշված տուժողներին ներկայացրել է ոստիկանություն, որտեղ Ա.Յովհաննիսյանը հաղորդում է տվել հանցագործության մասին: Վկա Ստեփան Ղամբարյանը ցուցմունք տվեց նաև, որ ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանը երբեք իրեն չի հայտնել, որ տուժողները զբաղվում են մուրացկանությամբ և չի խնդրել, որ դրա դեմ միջոցներ ձեռնարկվեն:

Վկա Նազելի Պյոտրի Հակոբյանի ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է Արման Հակոբյանի մայրը: Թափառաշրջիկությամբ զբաղվելու համար Արման Հակոբյանին տեղավորել է «Վարդաշենի» թիվ 1 հատուկ դպրոցում սովորելու:

2007թ. դեկտեմբեր ամսից սկսած՝ Ա.Հակոբյանը հաճախակի տանից և դպրոցից փախչել է, որի պատճառը սկզբնական ժամանակ չի իմացել: Հետագայում Արման Հակոբյանն իրեն պատմել է, որ այդ ընթացքում նա բնակվել է նույն դպրոցի սան Վահան Իշխանյանենց տանը: Ամբաստանյալ Գ.Յովհաննիսյանը պարտադրել է Ա. Հակոբյանին՝ Երևան քաղաքի փողոցներում զբաղվել մուրացկանությամբ և հավաքած գումարը հանձնել իրեն:

Նշել է, որ Ա. Հակոբյանն իրեն խոստովանել է, որ մուրացկանությամբ զբաղվել է ստիպված, քանի որ վախեցել է ամբաստանյալ Գ. Յովհաննիսյանից:

Դատական նիստից հետո Արման Հակոբյանը պատմել է, որ դատարանում նախաքննական ցուցմունքները փոխել է, քանի որ վկա Լ.Միրզոյանը իրեն վախեցրել է: Իմանալով այդ մասին՝ ինքը դատարանին դիմում է ներկայացրել: Իր ներկայությամբ ճիշտ ցուցմունք է տվել, պնդել նախաքննական ցուցմունքները :

Վկա Ալվարդ Հակոբի Բաղմանյանի ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է Ալբերտ Յովհաննիսյանի մայրը: Քանի որ Ալբերտ Յովհաննիսյանը հաճախակի տանից փախչել է և չի ենթարկվել իրեն, այդ պատճառով նրան տեղավորել է «Վարդաշեն» թիվ 1 հատուկ դպրոցում: Տեղյակ է, որ Ալբերտ Յովհաննիսյանը հաճախակի փախչել է դպրոցից և ըստ իր ենթադրությունների՝ զբաղվել մուրացկանությամբ: Ինքը Օպերայի շենքի մոտակայքում Ալբերտ Յովհաննիսյանին տեսել է մուրացկանությամբ զբաղվելիս և նրան տարել է տուն: Սկզբնական շրջանում Ալբերտ Յովհաննիսյանն իրենից թաքցրել է մուրացկանությամբ զբաղվելու պատճառները, սակայն 2008թ. հունիս ամսին խոստովանել է, որ երբ տանից և դպրոցից փախչել է, այդ ընթացքում բնակվել է իրենց դպրոցի սան Վահան Իշխանյանենց տանը: Վահանենց տանը բնակվելու ընթացքում ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանը վախեցրել է, ստիպել, որ զբաղվեն մուրացկանությամբ, ու այդ նպատակով ամեն առավոտ ավտոմեքենայով իրեն տեղափոխել է Երևանի

տարբեր փողոցներ, որտեղ ինքը մուրացկանությամբ դրամ է հավաքել և երեկոյան հանձնել նրան:

Գարիկ Յովհաննիսյանը բացի Ալբերտ Յովհաննիսյանից, այլ երեխաների նույնպես պարտադրել է զբաղվել մուրացկանությամբ:

Դատական նիստից հետո Ալբերտ Յովհաննիսյանը պատմել է, որ դատարանում նախաքննական ցուցմունքները փոխել է, քանի որ վկա Լ.Միրզոյանը իրեն վախեցրել է: Այդ մասին ինքը դատարանին դիմում է ներկայացրել, և խնդրել՝ իրեն և երեխային նորից հարցաքննել: Հետագայում դատարանում տուժող Ա.Յովհաննիսյանը իր ներկայությամբ ճիշտ ցուցմունք է տվել, պնդել նախաքննական ցուցմունքները:

Վկա Լարիսա Եղիշեի Սարգսյանի ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է «Վարդաշենի» թիվ 1 հատուկ դպրոցի տնօրենը: Աշխատանքի բերումով մոտ մեկ տարի է ճանաչում է թիվ 1 կրթահամալիրի սան Վահան Իշխանյանի մոր ընկերոջը՝ Գարիկ Յովհաննիսյանին:

2008թ. մայիս-հունիս ամիսներին, կրթահամալիրի սաներ Ալբերտ Յովհաննիսյանը և Արման Հակոբյանը ծնողների խնդրանքով գնացել են դպրոցից, սակայն ժամանակին չեն վերադարձել ու հաճախակի բացակայել են դասերից: Հետագայում՝ 2008թ. հուլիս ամսին, երբ Ա.Հակոբյանը և Ա.Յովհաննիսյանը հայտնաբերվել ու ներկայացվել են դպրոց, իրեն պատմել են, որ դպրոցից պարբերաբար բացակայելու ընթացքում նրանք բնակվել են Վահան Իշխանյանի տանը, և այնտեղ բնակվելու ժամանակահատվածում, ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանն ավտոմեքենայով առավոտյան իրենց տեղափոխել է Երևանի տարբեր փողոցներ, որտեղ իրենք Գ. Յովհաննիսյանի պահանջով զբաղվել են մուրացկանությամբ և հավաքած գումարները հանձնել նրան:

Նշել է, որ Ա.Յովհաննիսյանն ու Ա.Հակոբյանն իրեն պատմել են, որ Գարիկ Յովհաննիսյանից վախեցել են, այդ պատճառով էլ զբաղվել են մուրացկանությամբ: Դրանից հետո Ալբերտ Յովհաննիսյանը փոխտնօրեն Ղամբարյանի ուղեկցությամբ գնացել է ոստիկանություն և հանցագործության մասին տվել հաղորդում:

Վկա Լարիսա Սարգսյանը ցուցմունք տվեց նաև, որ ամբաստանյալ Գարիկ Յովհաննիսյանը երբեք իրեն չի հայտնել, որ տուժողները զբաղվում են մուրացկանությամբ և չի խնդրել, որ դրա դեմ միջոցներ ձեռնարկվեն: Ձննություն կատարելու մասին արձանագրությամբ, համաձայն որի՝ զննության մասնակիցներ Արման Հակոբյանը և Ալբերտ Յովհաննիսյանը մատնացույց են արել Լիանուշ Միրզոյանի՝ Երևանի Շիրակի փողոցի թիվ 2ա հանրակացարանի թիվ 727-րդ սենյակը և հայտարարել, որ դպրոցից բացակայելու ժամանակահատվածում բնակվել են նշված տանը և զբաղվել մուրացկանությամբ:

Փաստաթղթի զննում կատարելու մասին արձանագրությամբ, համաձայն որի՝ Արման Հակոբյանը, Վահան Իշխանյանը և Ալբերտ Յովհաննիսյանը 2008թ. ապրիլ, մայիս և հունիս ամիսների ընթացքում տևական ժամանակ բացակայել են դասերից:

Դատարանը վերլուծելով և գնահատելով քրեական գործի նյութերը, ապացուցված է համարում, որ ամբաստանյալ Գարիկ Յենրիկի Յովհաննիսյանը՝ 2007-2008թթ. ընթացքում «Վարդաշենի» թիվ 1 և «Նուբարաշենի» թիվ 18 կրթահամալիրի սաներ, դեռահաս և անչափահաս Արման Հակոբյանի, Ալբերտ Յովհաննիսյանի, Վահան Իշխանյանի, Յովհաննես Պողոսյանի և Մերաբ Բժանիյայի վիճակի խոցելիությունն օգտագործելով, սպառնալիքներ տալով, կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրմամբ, շահադիտական նպատակով նրանց ներգրավել է հարկադիր աշխատանքի մեջ՝ պարտադրելով Երևան քաղաքի փողոցներում զբաղվել մուրացկանությամբ և վաստակած գումարները հանձնել իրեն:

«Երեխայի իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետություններն ընդունում են տնտեսական

շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց պաշտպանվածության երեխայի իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել նրա առողջության համար կամ խոչընդոտել կրթություն ստանալուն, կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը: Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական, վարչական և սոցիալական միջոցառումներ, ինչպես նաև միջոցներ են ձեռք առնում կրթության բնագավառում սույն հոդվածի իրականացման համար:

Աշխատանքի միջազգային կազմակերպության Ժնևյան 17.06-1999թ. «Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և դրանք արմատախիլ անելու անհետաձգելի միջոցառումների մասին» թիվ 182 կոնվենցիայի համաձայն՝ մանկական աշխատանքի վատթարագույն ձևեր են համարվում հակահասարակական գործունեության մեջ երեխայի օգտագործումը, հավաքագրումը և առաջարկություն անելը, կամ աշխատանքը, որը իր կատարման բնույթով կամ պայմաններով կարող է վնաս հասցնել երեխաների առողջությանը, անվտանգությանը և բարոյականությանը:

«Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» 28.06.1930թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր կամ պարտադիր աշխատանք՝ նշանակում է ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը պահանջվում է որոշակի պատժի սպառնալիքի ներքո:

ՀՀ քր. օր.-ի 132<sup>-1</sup>-րդ հոդվածը թրաֆիքինգը սահմանում է որպես մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավելը կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով:

Միջազգային և ՀՀ ներպետական վերը նշված իրավադրույթների պահանջների համատեքստում քննության առնելով քրեական գործով ձեռք բերված, պատշաճ իրավական ընթացակարգերի պահպանմամբ ստուգված և գնահատված ապացույցները, Վերաքննիչ քրեական դատարանը անհիմն է համարում պաշտպանական կողմի այն պատճառաբանությունները, որ ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանին մեղսագրված հանցանքն անհիմն է, և նրա գործողություններում բացակայում է հանցակազմը: Հիմնավոր չէ նաև այն պատճառաբանությունը, թե Գարիկ Հովհաննիսյանը տուժողներին մուրացկանության մեջ չի ներգրավել, մուրացկանությունը հակահասարակական արարք է և ոչ թե աշխատանք, ամբաստանյալը շահադիտական նպատակ չի հետապնդել, տուժողներից վերցրած գումարները օգտագործել է նրանց կարիքների համար, տուժողների նկատմամբ բռնություն, հարկադրանք չի կիրառվել, սեփական կամքին հակառակ չեն զբաղվել մուրացկանությամբ, հանցագործության կատարման մեջ բացակայում է ամբաստանյալի ուղղակի դիտավորությունը, տուժողները տվել են հակասական ցուցմունքներ:

Վերաքննիչ քրեական դատարանը գտավ և գործի նյութերով հիմնավորված է համարում, որ ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանը գործել է ուղղակի դիտավորությամբ, շահույթ ստանալու նպատակով օգտագործել է 12-15 տարեկան դեռահաս տուժողների, նրանց վիճակի խոցելիությունը, նաև այն, որ վերջիններիս նկատմամբ հարկադրանքը դրսևորվել է սպառնալիքներ տալով, վախեցնելով, բռնություն գործադրելով, նաև նրանց համար անցանկալի կրթահամալիրներ ներկայացնելուն հարկադրելու սպառնալիքով: Դատարանը շահույթ ստանալու նպատակով դեռահասներին առավտովանից մինչև ուշ գիշեր մուրացկանության մեջ ներգրավելը, բացի հակահասարակական արարք համարելուց, դիտում է նաև որպես նրանց պարտադրված աշխատանք: Տվյալ դեպքում ամբաստանյալ Գարիկ

Հովհաննիսյանը, մանկահասակ տուժողներին ոչ միայն ներգրավել է հակահասարակական գործունեության՝ մուրացկանության մեջ, այլև առավտովանից մինչև ուշ գիշեր շահագործելով, շահույթ ստանալու նպատակով, հարկադիր աշխատանքի ներգրավելով, այդ աշխատանքով լուրջ վնաս է պատճառել երեխաների առողջությանը, բարոյականությանը և անվտանգությանը: Գործով հաստատվել է, որ տուժողներից ստացած գումարները ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանը օգտագործել է հիմնականում իր կարիքների համար: Վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը տուժողների ցուցմունքները գնահատել է քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությամբ՝ առանց որևէ ցուցմունքի ավելի կամ պակաս արժանահավատ համարելու, արժանահավատության հարցը քննարկելիս հաշվի են առնվել գործի բոլոր փաստական հանգամանքները:

Ամբաստանյալ Գարիկ Հովհաննիսյանի կողմից ՀՀ քր. օր.-ի 132-<sup>1</sup>հոդ.-ի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված հանցանքը կատարելը և նրա մեղքը հաստատված են քրեական գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Վերաքննիչ քրեական դատարանը նկատի առնելով, որ ամբաստանյալ Գ.Հովհաննիսյանը վերաքննիչ բողոքում, ինչպես նաև դատարանում բողոքը հիմնավորելիս նշանակված պատժին չի անդրադարձել, ուստի վերաքննիչ դատարանը այդ հարցը քննության առարկա չի դարձրել:

Քրեական գործի քննության նախորդ փուլերի ընթացքում նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ չեն տրվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 393-րդ, 394-րդ, 402-րդ հոդվածներով, Վերաքննիչ քրեական դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

Ամբաստանյալի վերաքննիչ բողոքը մերժել:

**Գարիկ Հենրիկի Հովհաննիսյանի**՝ վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 132<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի ապրիլի 02-ի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ  
Իսկականի հետ ճիշտ է

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ